

«ԹՈՒՒՎՔԵՐԻ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ  
ՇԱՏ ԱՐԱԳ ԷՐ, ԵՒ ՅԱՐԱՏԵՒՕՐԷՆ  
ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԴԵՌ»

Կ՝ԸՍԷ ԸՆԿԵՐՈՒՀԻ ՌՈՒԲՐԵՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

Քալիֆորնիոյ նահանգի Երկրորդական վարժարաններու կրթական ծրագրին մէջ Մարդկային Իրաւունքներու եւ Ցեղասպանութեան վերաբերեալ նիւթերու ներմուծումը կը շահագրգռէ այդ հարցերով մտահոգ ամէն անձ, ինչպէս նաեւ կը հետաքրքրէ մեզ:

Քալիֆորնիոյ Նահանգային Օրէնսդիր Մարմինն կողմէ փութարկուած եւ կառավարիչ ձորն Տեօմէնեանի կողմէ վաւերացուած Assembly Bill No. 1273ը, որ վերոյիշեալ հարցի մասին տնօրինում կը կատարէր, գործադրութեան հանգրուանի մէջ դրուած է:

Այս մասին այժմէական տեղեկութիւններ ստանալու համար, խմբագրութիւնս դիմեց ընկերուի Ռուբինա Փիրումեանին, որ անդամ նշանակուած էր կրթական ծրագրի մէջ ներմուծելի բաժնի հեղինակող Յանգնախումբին: Ստորեւ՝ ընկերուիին հետ մեր ունեցած հարցազրոյցը:

«ԱՍՊԱՐԷԶ».— Ընկերուի Փիրումեան, նախ կրնայի՞ք մեզի կարգ մը տեղեկութիւններ ու բացատրութիւններ տալ Assembly Bill No. 1273ի մասին:

ՌՈՒԲՐԷՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.— 1985ի Հոկտեմբերին Քալիֆորնիոյ Հայ թերթերը արձագանգեցին Assembly Bill No. 1273ի վաւերաց-

մանը կառավարիչ ձորն Տէօքմէ-ճեանի կողմից: Հետաքրքրութիւնն ու ոգեւորութիւնը տեղին էր, որովհետեւ այս բանաձեւի վաւերացումով Մարդկային Իրաւունքներ-Ցեղասպանութիւն նիւթը մաս պիտի կազմէր Քալիֆորնիոյ Երկրորդական վարժարանների 7ից 12րդ (Շար. 31րդ էջ)

«Թուրքերի Հակազդեցութիւնը Շատ Արագ Էր

(Շար. 31րդ էջէն)  
միջոցներով օգտագործելի դարձնելու: Վերջապէս սա առաջին քայլն է նման չափանիշով եւ նման բնոյթով առնուած Քալիֆորնիոյ մէջ. պիտի յուսալ որ դա յաջողելու պարագային կը կրկնուի նաեւ միւս նահանգների մէջ ու կը սրբազրի նիւ Եորթի եւ Քանաթիքեթի Ցեղասպանութեան անյաջող դասանիւթերը:

«Ա».— Ուսմանց ծրագրի վերջնական վաւերացումէն յետոյ, ինչպէ՞ս գայն պիտի գործադրութեան դնեն դպրոցներու մէջ:

Ռ.Փ.— Պարզ է որ այս ծրագրի ամենակարեւոր փուլը մեզ համար նրա կիրարկումն է դպրոցների մէջ: Ուսմանց ծրագիրը իր վերջնական ձեւի մէջ էլ անմիջականօրէն կիրառելի դասանիւթ չէ, այլ միայն ծրագրաւորում, ուղղուած School Districtների մասնագէտներին, եւ դասագրքեր պատրաստող հաստատութիւններին, որոնք ըստ այդ ծրագրի պիտի պատրաստեն նիւթեր պատմութեան կամ ընկերային գիտութեանց ուսուցչին մատակարարելու համար: Ծրագիրը տառացիօրէն գործադրելու պարտադրանք չկայ: Մարդկային Իրաւունքներ-

Ցեղասպանութիւն դասանիւթը պատրաստող մասնագէտը կարող է ծրագրին հետեւելով դասանիւթը պատրաստել եւ գոհացնել պահանջուած պայմանները, առանց անգամ Հայկական Ցեղասպանութեան մէջ խորանալու, պարզ ակնարկումով միայն, եթէ իր տրամադրութեան տակ չունի դիւրամտչելի աղբիւրներ, նիւթեր եւ դասաւանդման միջոցներ: Եթէ նման մի մասնագէտ փորձէ պատրաստել հրէական ողջակիզման դասանիւթը, մէկ հեռախօս որեւէ հրէական հաստատութեան կը բաւէ իր տրամադրութեան տակ ունենալու ողջակիզման դասաւանդման արդէն իսկ պատրաստ լրիւ ծրագիրը, պարզ, որոշ եւ սխալեմաթիք դասանիւթերով, լսողատեսողական միջոցներով, պատրաստի շրջուն դասախօսներով եւ զանազան մատենագիտական աղբիւրների (փաստագրական, պատմական, գեղարուեստական) ցանկերով: Ի՞նչ ունենք մենք դրա դիմաց: 70 տարի է անցել Հայկական Ցեղասպանութիւնից եւ աղէտը դեռեւս զգացականից այն կողմ չի անցել: Մեզ այսօր պէտք են տեղեկատուութեան կեդրոններ, արագօրէն աղբիւրներ եւ նիւթեր

մատակարարելու, մեզ պէտք են հետազօտութեան եւ ուսումնասիրութեան հաստատութիւններ, մանկավարժ, պատմաբան, ընկերաբան մասնագէտներ ցեղասպանութեան դասանիւթեր եւ միջոցներ պատրաստելու: Առիթը ներկայացուած է: Կառավարիչ Տէօքմէճեանի մարդասիրական եւ արդարադատ ղեկավարութեան ներքոյ առիթ է մեր ձայնը լսելի դարձնելու, ամերիկեան ժողովրդին հենց դպրոցական նստարաններից Հայ ժողովրդի հանդէպ կատարուած ոճիրին հաղորդակից դարձնելու, պատմական իրողութիւնը փոխանցելու: Եթէ յաջողեցինք, այն ժամանակ դո՛նէ Քալիֆորնիոյ դպրոցներն աւարտած պատմաբանների եւ քաղաքագէտների մէջ ճասթիւն Մաքարթիներ, Սթանֆորդ Շոյեր, Ռապըրթ Բադհամներ, Թոմ Լանթոսներ, Ալֆրէդ Մքքանդլեսներ չեն դաստիարակուի. այն ժամանակ մեր ազգային, քաղաքական գործունէութիւնն էլ աւելի բարեացակամ եւ իրազեկ միջավայրի մէջ աւելի սահուն կ'ընթանայ:

«Ա».— Ծնորհակալութիւն ընկերուի Ռուբինա:



«ԹՈՒՒՎՔԵՐԻ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ  
ՇԱՏ ԱՐԱԳ ԷՐ, ԵՒ ՅԱՐԱՏԵՒՕՐԷՆ  
ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԴԵՌ»

Կ՝ԸՍԷ ԸՆԿԵՐՈՒՀԻ ՌՈՒԲՐԵՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

Քալիֆորնիոյ նահանգի Երկրորդական վարժարաններու կրթական ծրագրին մէջ Մարդկային Իրաւունքներու եւ Ցեղասպանութեան վերաբերեալ նիւթերու ներմուծումը կը շահագրգռէ այդ հարցերով մտահոգ ամէն անձ, ինչպէս նաեւ կը հետաքրքրէ մեզ:

Քալիֆորնիոյ Նահանգային Օրէնսդիր Մարմինն կողմէ փութարկուած եւ կառավարիչ ձորն Տեօմէնեանի կողմէ վաւերացուած Assembly Bill No. 1273ը, որ վերոյիշեալ հարցի մասին տնօրինում կը կատարէր, գործադրութեան հանգրուանի մէջ դրուած է:

Այս մասին այժմէական տեղեկութիւններ ստանալու համար, խմբագրութիւնս դիմեց ընկերուի Ռուբինա Փիրումեանին, որ անդամ նշանակուած էր կրթական ծրագրի մէջ ներմուծելի բաժնի հեղինակող Յանգնախումբին: Ստորեւ՝ ընկերուիին հետ մեր ունեցած հարցազրոյցը:

«ԱՍՊԱՐԷԶ».— Ընկերուի Փիրումեան, նախ կրնայի՞ք մեզի կարգ մը տեղեկութիւններ ու բացատրութիւններ տալ Assembly Bill No. 1273ի մասին:

ՌՈՒԲՐԷՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.— 1985ի Հոկտեմբերին Քալիֆորնիոյ Հայ թերթերը արձագանգեցին Assembly Bill No. 1273ի վաւերաց-

մանը կառավարիչ ձորն Տէօքմէ-ճեանի կողմից: Հետաքրքրութիւնն ու ոգեւորութիւնը տեղին էր, որովհետեւ այս բանաձեւի վաւերացումով Մարդկային Իրաւունքներ-Ցեղասպանութիւն նիւթը մաս պիտի կազմէր Քալիֆորնիոյ Երկրորդական վարժարանների 7ից 12րդ (Շար. 31րդ էջ)

«Թուրքերի Հակազդեցութիւնը Շատ Արագ Էր

(Շար. 31րդ էջէն)  
միջոցներով օգտագործելի դարձնելու: Վերջապէս սա առաջին քայլն է նման չափանիշով եւ նման բնոյթով առնուած Քալիֆորնիոյ մէջ. պիտի յուսալ որ դա յաջողելու պարագային կը կրկնուի նաեւ միւս նահանգների մէջ ու կը սրբազրի նիւ Եորքի եւ Քանաթիքեթի Ցեղասպանութեան անյաջող դասանիւթերը:

«Ա».— Ուսմանց ծրագրի վերջնական վաւերացումէն յետոյ, ինչպէ՞ս գայն պիտի գործադրութեան դնեն դպրոցներու մէջ:

Ռ.Փ.— Պարզ է որ այս ծրագրի ամենակարեւոր փուլը մեզ համար նրա կիրարկումն է դպրոցների մէջ: Ուսմանց ծրագիրը իր վերջնական ձեւի մէջ էլ անմիջականօրէն կիրառելի դասանիւթ չէ, այլ միայն ծրագրաւորում, ուղղուած School Districtների մասնագէտներին, եւ դասագրքեր պատրաստող հաստատութիւններին, որոնք ըստ այդ ծրագրի պիտի պատրաստեն նիւթեր պատմութեան կամ ընկերային գիտութեանց ուսուցչին մատակարարելու համար: Ծրագիրը տառացիօրէն գործադրելու պարտադրանք չկայ: Մարդկային Իրաւունքներ-

Ցեղասպանութիւն դասանիւթը պատրաստող մասնագէտը կարող է ծրագրին հետեւելով դասանիւթը պատրաստել եւ գոհացնել պահանջուած պայմանները, առանց անգամ Հայկական Ցեղասպանութեան մէջ խորանալու, պարզ ակնարկումով միայն, եթէ իր տրամադրութեան տակ չունի դիւրամտօղի աղբիւրներ, նիւթեր եւ դասաւանդման միջոցներ: Եթէ նման մի մասնագէտ փորձէ պատրաստել հրէական ողջակիզման դասանիւթը, մէկ հեռախօս որեւէ հրէական հաստատութեան կը բաւէ իր տրամադրութեան տակ ունենալու ողջակիզման դասաւանդման արդէն իսկ պատրաստ լրիւ ծրագիրը, պարզ, որոշ եւ սխալեմաթիք դասանիւթերով, լսողատեսողական միջոցներով, պատրաստի շրջուն դասախօսներով եւ զանազան մատենագիտական աղբիւրների (փաստագրական, պատմական, գեղարուեստական) ցանկերով: Ի՞նչ ունենք մենք դրա դիմաց: 70 տարի է անցել Հայկական Ցեղասպանութիւնից եւ աղէտը դեռեւս զգացականից այն կողմ չի անցել: Մեզ այսօր պէտք են տեղեկատուութեան կեդրոններ, արագօրէն աղբիւրներ եւ նիւթեր

մատակարարելու, մեզ պէտք են հետազօտութեան եւ ուսումնասիրութեան հաստատութիւններ, մանկավարժ, պատմաբան, ընկերաբան մասնագէտներ ցեղասպանութեան դասանիւթեր եւ միջոցներ պատրաստելու: Առիթը ներկայացուած է: Կառավարիչ Տէօքմէճեանի մարդասիրական եւ արդարադատ ղեկավարութեան ներքոյ առիթ է մեր ձայնը լսելի դարձնելու, ամերիկեան ժողովրդին հենց դպրոցական նստարաններից Հայ ժողովրդի հանդէպ կատարուած ոճիրին հաղորդակից դարձնելու, պատմական իրողութիւնը փոխանցելու: Եթէ յաջողեցինք, այն ժամանակ դո՛ւնք Քալիֆորնիոյ դպրոցներն աւարտած պատմաբանների եւ քաղաքագէտների մէջ ճասթիւն Մաքարթիներ, Սթանֆորդ Շոյեր, Ռապըրթ Բադհամներ, Թոմ Լանթոսներ, Ալֆրէդ Մքքանդլեսներ չեն դաստիարակուի. այն ժամանակ մեր ազգային, քաղաքական գործունէութիւնն էլ աւելի բարեացակամ եւ իրազեկ միջավայրի մէջ աւելի սահուն կ'ընթանայ:

«Ա».— Ծնորհակալութիւն ընկերուի Ռուբինա: